ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆԿՏԱՆԻ» (ՆԱՀԱՐՈՍՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 101 - 102 (17108) ՇԱԲԱԹ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԲՈՒԽԱՐԵՍՏՅԱՆ ՔԱՌԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՍԵՎԾՈՎՅԱՆ ՄՈԼՈՒԽԸ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ»



Դեկտեմբերի 17-ին, Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստի Կոտրոչենի պալատում, Վրաստանի, Ադրբեջանի, Ռումինիայի, Հունգարիայի, ինչպես նաեւ Եվրահանձնաժողովի ղեկավարների մասնակցությամբ, անցկացվեց «Ռազմավարական գործընկերություն կանաչ էներգիայի զարգացման եւ բաշխման հարցերում» լիագումար նիստ, որի շրջանակներում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, Ռումինիայի նախագահ Կլաուս Յոհանիսը եւ Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը ստորագրեցին համաձայնագիր՝ աշխարհի ամենաերկար ստորջրյա էլեկտրահաղորդման գծի կառուցման վերաբերյալ, որը կապում է Հունգարիան, Ռումինիան, Վրաստանն ու Ադրբեջանը:

Արարողությանը ներկա էր Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենը:

Ինչպես նշեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, այս նախագիծը նոր հնարավորություններ է ընձեռում ողջ տարածաշրջանի եւ էներգետիկ անվտանգության ենթակառուցվածքի կայունության համար:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՄԱՆՈՐՅԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 21-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, տիկնոջ՝ Նունուկա Թամազաշվիլու հետ, ամանորյա ընդունելությանը հյուրընկալեց Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:



Կառավարության ղեկավարը շնորհավորեց դեսպաններին տոների առիթով, ամփոփեց տարվա ընթացքում ձեռք բերված հաջողություններն ու խոսեց առաջիկա անելիքների մասին:

Իրակլի Ղարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց դիվանագետներին աջակցության եւ բարեկամության համար: Ընդունելությանը ներկա էին նաեւ գործադիր իշխանությունների ներկայացուցիչներ:

ԳՈՐԾԱԴԻՐ

«ԽՈՒԴՈՆՀԷԿ»-Ի ԳՆՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ



Դեկտեմբերի 19-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որի օրակարգում ներառվել էր 17 հարց:

Կառավարության անդամները քննարկեցին «ԽուդոնՀԷԿ»-ի գնման հարցը, որի հիման վրա պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ ՀԷԿ-ը պետությանը հանձնելու վերաբերյալ:

Քննարկված հարցերի թվում էր «էլեկտրոնային առեւտրի մասին» Վրաստանի օրենքի նախագիծը եւ դրանից բխող օրենքների նախագծերը, որոնք կկարգավորեն էլեկտրոնային առեւտրի հետ կապված իրավահարաբերությունները: Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնած նոր օրենքը, ի թիվս այլ կա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՕՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 20-ին, Վրաստանի Ազգային գվարդիայի ստեղծման օրը, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Օրբելիանիների նախագահական նստավայրում, հյուրընկալեց Վրաստանի Ազգային գվարդիայի եւ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներին:



Վրաստանի նախագահը շնորհավորեց Ազգային գվարդիայի ներկայացուցիչներին՝ տոնի առիթով, հաջողություններ մաղթեց գվարդիականներին եւ շնորհակալություն հայտնեց ծառայության համար:

- Մեր այսօրվա միջոցառումը համընկնում է (թեեւ դա պատահական չէ) Ազգային գվարդիայի ստեղծման օրվա հետ, եւ ես ուրախ եմ, որ մենք՝ միասին նշում ենք այս օրը: Քանի որ 1920 թվականի դեկտեմբերի 20-ին, այսինքն՝ 102 տարի առաջ, Վրաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, ստեղծվել է Ազգային գվարդիան,- ընդունելությանն ասաց նախագահը:

Նշենք, որ դեկտեմբերի 20-ին նշվում է Վրաստանի Ազգային գվարդիայի ստեղծման օրը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՌԱՏԻ ԲՐԵԳԱՁԵ. «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ»



Դեկտեմբերի 16-ին, Վրաստանի խորհրդարանի աշնանային նստաշրջանի եզրափակիչ լիագումար նիստում, «Նախարարի ժամ» ձեւաչափով, հանդես եկավ Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն, որը ներկայացրեց գերատեսչության կողմից իրականացված աշխատանքն ու առաջիկա ծրագրերը:

Ներկայացնելով նախարարության գործունեության հաշվետվությունը՝ Ռատի Բրեգաձեն խոսեց բնակչությանը մատուցվող սպասարկումների որակի նշանակության, արդարադատության տների եւ հասարակական կենտրոնների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մասին, ուշադրություն բեւեռեց նոր սպասարկումների եւ մոտեցումների վրա:

- Քրեակատարողական համակարգի աշխատակիցների կողմից բանտարկյալների նկատմամբ բռնության ոչ մի փաստ չի վավերացվել, այն ժամանակ, երբ 2011 թվականին, անմարդկային վերաբերմունքը բանտարկյալների նկատմամբ, պարբերական բնույթ էր կրում,- հայտարարեց նախարարը: Նա՝ անդրադառնալով քրեակատարողական համակարգում ծրագրված փոփոխություններին, նշեց, որ քրեակատարողական հաշվետվություններում բոլոր տեսակի ժամադ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 3-6-Ը՝ ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու որոշմամբ, Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված վարչական մարմիններում աշխատողների համար, 2023 թվականի հունվարի 3-6-ը ներառյալ, հայտարարվում է ոչ աշխատանքային:

Որոշման մեջ նշված է, որ վարչական մարմինը ինքն է որոշում իր համակարգում աշխատողների վրա վերոնշյալ որոշման տարածումը, եթե նրանց աշխատանքով պայմանավորված է ծառայության նորմալ գործառույթը: Միաժամանակ, տվյալ որոշումը չի տարածվում Ազգային բանկի վերահսկողությանը ենթակա անձանց, ինչպես նաեւ՝ «Պետական գնումների մասին» Վրաստանի օրենքով սահմանված պետական գնումների հետ կապված գործառույթների վրա:

ՎՐԱՍՏԱՆ - ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Դեկտեմբերի 21-22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, երկօրյա պաշտոնական այցով, գտնվում էր Սաուդյան Արաբիայում:



Այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Սաուդյան Արաբիայի Թագավորության թագաժառանգ եւ վարչապետ Մուհամեդ բեն Սալման բեն Աբդուլազիզ Ալ Սաուդի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին տնտեսական համագործակցության խորացման հեռանկարները, կարեւորեցին Վրաստանի՝ որպես Ասիան եւ Եվրոպան կապող տարանցիկ հանգույցի եւ մեծ ներուժ ունեցող տրանսպորտային միջանցքի դերն ու նշանակությունը, նաեւ՝ Սաուդյան Արաբիայի կողմից Վրաստանի ներուժն ավելի ակտիվ օգտագործելու պատրաստակամությունը:

Ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին, Վրաստանը Սաուդյան Արաբիայի համար գրավիչ երկիր է ինչպես պետական ներդրումային հիմնադրամների, այնպես էլ՝ մասնավոր բիզնեսի առումով: Քննարկվեցին տարածաշրջանային ընթացիկ ու գլոբալ մարտահրավերները եւ ընդհանուր շահերի համատեքստում գործընկերության ընդլայնման հնարավորությունները:

Հանդիպմանն ընդունվեց որոշում՝ ստեղծել համատեղ աշխատանքային խմբեր տարբեր ոլորտներում, որոնք տարեկան երկու անգամ զեկույցներ կներկայացնեն անմիջապես վարչապետերին:

ԲՈՒԽԱՐԵՍՏՅԱՆ ՔԱՂԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՍԵՎԾՈՎՅԱՆ ՄՈԼՈՒԽԸ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Վրաստանի աշխարհառազմավարական դիրքը մեզ դարձնում է Արեւմուտքն ու Արեւելքը կապող կամուրջ, ինչպես նաեւ՝ դարպաս դեպի ծով ելք չունեցող ութ երկրների, Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի համար, որը Եվրամիության գլոբալ կապի քարտեզի ամենակարեւոր հանգույցն է, տրանսպորտային երթուղիների դիվերսիֆիկացումը եւ էներգառեսուրսների մատակարարումը Եվրոպա,- փաստաթղթի ստորագրման արարողությանը հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ ներկայիս աշխարհաքաղաքական մարտահրավերները եւ Ուկրաինայում շարունակվող պատերազմն ընդգծում են դիվերսիֆիկացման եւ ճկունության անհրաժեշտությունը՝ էներգետիկ անվտանգության ոլորտում հրատապ մարտահրավերներին դիմակայելու համար:

Փաստաթուղթը հիմնված է չորս երկրների շահերի վրա՝ կապված Սեւ ծովի ավազանում ազգային եւ տարածաշրջանային էներգետիկ անվտանգության եւ կապի ամրապնդման, մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացման, Կասպից տարածաշրջանում վերականգնվող էներգիայի արտադրության ներուժի կապիտալացման եւ մասնաբաժնի ավելացման հետ:

Քառակողմ միջկառավարական համաձայնագիրը նախատեսում է, վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա փոխադրելու համար, Ռումինիայի եւ Ադրբեջանի միջեւ Վրաստանի եւ Սեւ ծովի տարածքով սուզանավային մոլուխային ծրագրի իրականացում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՌԱՏԻ ԲՐԵԳԱԶԵ. «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԻ ՕՐԵՆԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րությունները կլինեն անվճար: Բացառությամբ առանձնակի վտանգավոր բանտարկյալների՝ բոլորը կունենան բարձրագույն կրթություն ստանալու իրավունք: Ավելացվում է հեռախոսազրույցների թիվն ու տեւողությունը:

Նշենք, որ ընդդիմադիր պատգամավորները խորհրդարանում արդարադատության նախարարի հայտնվելը դիմավորեցին բողոքի արտահայտություններով: Նրանք նախարարին դիմավորեցին նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու «Վիվամեդ» կլինիկայում նկարահանած լուսանկարներով եւ, ի նշան բողոքի, թողեցին նիստերի դահլիճը: Ռատի Բրեգաձեն խստորեն դատապարտեց պատգամավորների նման քայլը, նշելով, որ նրանք հիմնականում զբաղված են ապակայունացման գործերով:


- Ցանկանում եմ ներողություն խնդրել մեր ժողովրդից, այդ թվում՝ նաեւ արմատական ընդդիմության գործողություններից, որոնք հստակ ցույց է տալիս, որ ընդհանուր ոչինչ չունեն օրենսդրական գործունեության, քաղաքակիրթ, քաղաքական մշակույթի հետ,- ասաց Արդարադատության նախարարը:

Անդրադառնալով ընդդիմության կողմից բազմիցս շահարկված Միխեիլ Սաակաշվիլու առողջության վերաբերյալ թեմային՝ Արդարադատության նախարարը նշեց, որ պետությունը Միխեիլ Սաակաշվիլու վրա ծախսում է շատ ավելի մեծ գումար, քան մյուս բանտարկյալների վրա: Ըստ Արդարադատության նախարարի՝ մեկ տարվա ընթացքում Սաակաշվիլուն բանտում եւ կլինիկաներում պահելու համար, ծախսվել է մոտ 200 հազար լարի, այն դեպքում, երբ ցանկացած այլ բանտարկյալի համար տարեկան ծախսվում է 17400 լարի: Բրեգաձեն նաեւ նշեց, որ, բանտարկությունից հետո անցած ժամանակահատվածում, Միխեիլ Սաակաշվիլին օգտվել է ավելի քան 1500 ժամադրությունից:

Ինչ վերաբերում է Միխեիլ Սաակաշվիլուն բուժման համար արտասահման ուղարկելու մասին ընդդիմության պահանջի, ինչպես նաեւ անհատական տվյալներ պարունակող տեսահոլովակի հեռարձակման թեմային, նախարարը բոլոր նրանց, ովքեր համաձայն չեն նման մոտեցմանը, կոչ արեց արդարադատության նախարարության գործունեությունը բողոքարկել դատական կարգով:

Առաջիկա ծրագրերին անդրադառնալով՝ Արդարադատության նախարարը պատգամավորների ուշադրությունը բեւեռեց՝ Ներքին գործերի, Պաշտպանության, Կրթության եւ գիտության նախարարությունների հետ միասին մշակած նախագծի վրա: Նրա խոսքով, նախարարությունը գործում է նախօրոք կազմած, հաստատված ծրագրով եւ իրականացնում է բոլոր այն բարեփոխումները, որոնք ուղղված են երկրի զարգացմանը:

Խորհրդարանի ընթացակարգի համաձայն՝ «Նախարարի ժամը» ավարտվեց Արդարադատության նախարարին ուղղված հարցերի պատասխաններով:



ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ «ՀՈԼՈԴՈՄՈՐԸ» ՃԱՆԱՉՎԵԼ Է՝ ՈՐՊԵՍ ՈՒԿՐԱԻՆԱՑԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրախորհրդարանը «Հոլոդոմորը» ճանաչել է՝ որպես ուկրաինացի ժողովրդի ցեղասպանություն: Համապատասխան բանաձեւի օգտին, դեկտեմբերի 15-ին, քվեարկել է Եվրախորհրդարանի 507 պատգամավոր, դեմ է հանդես եկել 12-ը:

Եվրախորհրդարանը «Հոլոդոմորը»՝ 1932-33 թվականներին Ուկրաինայում արհեստական սովը, որակել է որպես խորհրդային իշխանության գիտակցական գործողություն՝ ուղղված ուկրաինական ժողովրդի դեմ, որի արդյունքում մահացան միլիոնավոր ուկրաինացիներ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՀՆԴԿԱՍՏԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐՈՒՄ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ԴՈԼԱՐԻՑ ԵՎ ԵՎՐՈՅԻՑ

Ռուսաստանն ու Հնդկաստանը փոխադարձ առեւտրում հրաժարվում են դոլարից եւ եվրոյից ու անցնում են ազգային արժույթների:

Նոյեմբերի սկզբին՝ Հնդկաստանի կառավարությունը թույլատրել է ազգային արժույթն օգտագործել միջազգային առեւտրային հաշվարկներում, նշելով, որ այս տարի Ռուսաստանի հետ հաշվարկներում երկիրը կսկսի ռուփի օգտագործել: Հնդկաստանը մտադիր է կրկնապատկել Ռուսաստանի հետ առեւտրի ծավալները՝ օգտագործելով, մասնավորապես, ազգային արժույթը:

ԱՄՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵՆ՝ 1,7 ՏՐԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ

ԱՄՆ-ի Սենատը քվեարկել է 2023 թվականի բյուջեի 1,7 տրիլիոն դոլար գումարի նախագծի օգտին:

Օրինագիծը, որին կողմ են քվեարկել 68 սենատորներ, դեմ՝ 29, ներառում է նաեւ գրեթե 45 միլիարդ դոլարի լրացուցիչ օգնություն Ուկրաինային:

Փաթեթը ներառում է 9 միլիարդ դոլարի սպառազինություն եւ ավելի քան 15 միլիարդ դոլարի տնտեսական եւ հումանիտար օգնություն, 858 միլիարդ դոլարի չափով պաշտպանական ծախսեր: 2023 ֆինանսական տարվա ԱՄՆ պաշտպանական բյուջեի նախագիծը 45 միլիարդ դոլարով ավելի է այն գումարից, որ տարվա սկզբին պահանջել էր երկրի նախագահ Ջո Բայդենը:

Օրինագիծը ներկայացվել է ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հաստատմանը, այնուհետեւ այն պետք է ստորագրի ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենը:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 303-ՐԴ ՕՐ

ՎՐԱՍՏԱՆԻՑ ՈՒԿՐԱԻՆԱ՝ 1,5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ 25 ՄԻԱՎՈՐ ԲԱՐՁՐ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐ

Վրաստանից Ուկրաինա է ուղարկվել 25 միավոր բարձր հզորության գեներատորներ, որոնք, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հանձնարարությամբ, գնել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության համակարգի ներքո գործող «Վրաստանի պետական էլեկտրահամակարգը»:

Գերատեսչության տվյալներով՝ խոսքը 1,5 մլն լարի արդյունաբերական նշանակության գեներատորների մասին է, որոնց օգնությամբ հնարավոր է, որ շտապ ռեժիմով աշխատեն հիվանդանոցները, սննդի ու այլ կարեւոր նշանակության օբյեկտներ:

ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՋՈ ԲԱՅԴԵՆ-ՎԼԱԴԻՄԻՐ ՋԵԼԵՆՍԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ուկրաինայում պատերազմական գործողությունների մեկնարկից անցած 10 ամիսների ընթացքում՝ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Ջելենսկին առաջին անգամ դուրս եկավ երկրի սահմաններից եւ Վաշինգտոն մեկնեց Լեհաստանի ժեշուվ քաղաքից ԱՄՆ ռազմաօդային ուժերի ինքնաթիռով:

ԱՄՆ-ում նա հանդիպում ունեցավ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի հետ: Հանդիպմանը Սպիտակ տան ղեկավարը հաստատեց, որ ավելի քան 2 մլրդ դոլարի օգնություն կտրամադրի Ուկրաինային եւ խոստացավ եւս 45 մլրդ դոլարի աջակցություն:

Վլադիմիր Ջելենսկին դիմեց նաեւ ԱՄՆ Կոնգրեսին, վստահություն հայտնեց, որ Կոնգրեսի երկու կուսակցություններն էլ աջակցություն կցուցաբերեն իր երկրին:

Հիշեցնենք՝ Ուկրաինայում ռազմական գործողությունների 10 ամիսների ընթացքում Վլադիմիր Ջելենսկին առաջին անգամ էր լքում երկիրը:

ՕԿՈՒՊԱՆՏՆԵՐԸ ԼՈՒՐՋ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՈՒՆԵՆ

Ինչպես տեղեկացրել է Ուկրաինայի զինված ուժերի գլխավոր շտաբը, Ուկրաինայի զինված ուժերը Խերսոնի եւ Զապորոժյեի մարզերում զինտեխնիկայի եւ զինծառայողների լուրջ կորուստներ են պատճառել հակառակորդին: Գլխավոր շատաբի տեղեկությամբ, միայն Խերսոնի մարզում ոչնչացվել է հակառակորդի 8 միավոր ծանր զինտեխնիկա:

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ռուսական ուժերը իններորդ անգամ լայնածավալ հրթիռային հարված են հասցրել Ուկրաինայի ուղղությամբ: Ավելի քան 70 թեւավոր հրթիռ է արձակվել երկրի տարբեր շրջանների ուղղությամբ: Դրանց մեծ մասը՝ 60 հրթիռ, չեզոքացվել է ՀՕՊ համակարգերով, թեեւ մի քանիսը դեռ հասել են թիրախին՝ վնասելով էներգետիկ ենթակառուցվածքները եւ Ժիտոմիրի, Կիեւի, Խարկովի, Դնեպրոպետրովսկի եւ Զապորոժյեի շրջանների բնակելի շենքերը:

Լայնածավալ հրթիռային հարձակման հետեւանքով դադարեցվել է երկրի կեսի էլեկտրամատակարարումը:

Ըստ լրատվական գործակալությունների

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

«ԽՈՒԴՈՆՇԷԿ»-Ի ԳՆՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րեւոր հարցերի, պետք է ապահովի էլեկտրոնային առեւտրի գործընթացում ծառայություն ստացողի իրավունքների պաշտպանությունը եւ նվազագույն տեղեկատվություն տրամադրելու ծառայություն մատուցողի պարտավորությունը, ինչը կբարձրացնի ծառայության նկատմամբ վստահությունը մատակարարներին, եւ կնվազեցնի ծառայություններ ստացողների ռիսկերը:

Օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Եվրամիության հետ խորը եւ համապարփակ ազատ առեւտրի տարածքի մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությամբ՝ միջանկյալ ծառայություններ մատուցողների իրավունքներն ու պարտականությունները Վրաստանի օրենսդրության մեջ արտացոլելու ուղղությամբ: Ծրագիրը մշակվել է ԱՄՆ-ի տեխնիկական աջակցության շրջանակներում:

Կառավարության անդամների կողմից քննարկված մեկ այլ հարց էր Վրաստանի կառավարության՝ «Պետական երիտասարդության ռազմավարության 2023-2026» բանաձեւի նախագծի հաստատումը: Նշված ռազմավարությունը, որը ստեղծվել է Մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարության համակարգմամբ, առաջին ռազմավարությունն է երիտասարդության ոլորտում եւ լինելու է Վրաստանի կառավարության հիմնական ուղղորդող փաստաթուղթն այս ուղղությամբ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՇՐՋԱՆԱՌՎՈՒՄ Է ԵՐԵՔ ՏԵՍԱԿԻ ՎԻՐՈՒՍ



Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի հայտարարությամբ՝ բժշկության բնագավառում հայտնվել է նոր տերմին՝ «տրիպլդեմիա», որը նշանակում է միաժամանակ երեք վարակի շրջանառություն: Դրանք են գրիպը, կորոնավիրուսը եւ ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսը: Բոլոր երեք վիրուսների դեպքում՝ արձանագրվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացում, հազ, կոկորդի ցավ, գլխացավ եւ թուլություն:

Սակայն կան նաեւ տարբերություններ, մասնավորապես, այժմ Վրաստանում տարածված կորոնավիրուսի «Օմիկրոն» ենթատեսակին բարձր ջերմությունը հատուկ չէ, այն տատանվում է 37,5-ից մինչեւ 38 աստիճանի սահմաններում: Իսկ գրիպի դեպքում՝ ջերմությունը բարձրանում է 38-ից ավելի, առկա են թուլություն, գլխացավ եւ հազ: Գաբունիայի խոսքով՝ գրիպն ընթանում է անհամեմատ ավելի ծանր, քան՝ կորոնավիրուսը:

Հատկապես հարկ է առանձնացնել ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսները, որոնք, բժիշկների խոսքով, ախտահարում են ստորին շնչուղիները, հետեւաբար, զարգանում է բրոնխիոլիտ: Հիվանդները գանգատվում են հաճախացած շնչառությունից, առատ քթարտադրությունից, վատ ախորժակից: Այս վիրուսի դեպքում ծնողները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն՝ մինչեւ մեկ տարեկան երեխաներին, առանձին դեպքերում հարկավոր է բուժումն անցկացնել կլինիկայում: Երեք վարակների դեպքում էլ բարդություն է համարվում թոքաբորբը:

Բրոնխիոլիտը հիմնականում արձանագրվում է՝ մինչեւ երկու տարեկան երեխաների շրջանում: Բարդությունների թվում են ե'ւ ականջի բորբոքումը, ե'ւ սինուսիտը, բայց դրանք կյանքի համար վտանգավոր չեն, ինչպես, օրինակ, թոքաբորբը: Ակնկալվում է, որ սուր շնչառական վարակների տարածումն իր գագաթակետին կհասնի դեկտեմբեր-հունվարին:

Փոխնարարը, միաժամանակ, նշեց, որ, վերջին ժամանակներում վիրուսների տարածման տեսանկյունից, վավերացվել է որոշակի կայունություն, «Covid-19»-ի դեմ ձեռնարկված միջոցառումները պաշտպանում են նաեւ գրիպից եւ գրիպանման վիրուսներից:

ՀԱԱԳԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԸ ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ՈՐՈՇՈՒՄ

Հաագայի միջազգային դատարանն ընդունեց պատմական որոշում. դատարանն ավարտեց 2008 թվականի օգոստոսյան պատերազմի գործի քննարկումը: Ընդունված որոշման համաձայն, ոչ մի վրաց զինծառայողի դեմ քրեական գործ չհարուցվեց:

Փորձագետների գնահատմամբ՝ տվյալ որոշումը նշանակում է 2008 թվականին Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ կատարած հանցագործությունների ճանաչում միջազգային հանրության կողմից:

Նշենք, որ Հաագայի միջազգային դատարանի կողմից պատերազմական հանցագործության մեջ մեղադրվել են Հարավային Օսեթիայի դե-ֆակտո իշխանության նախկին ներքին գործերի նախարար Միխեիլ Մանճաեւը, ինքնահռչակ հանրապետության, այսպես կոչված, օմբուդսմեն Դավիթ Սանակոեւը եւ Ցխինվալիի ժամանակավոր մեկուսացման նախկին ղեկավար Գամլետ Գուչմազովը:

Նշենք, որ միջազգային դատարանի դատախազ Քերիմ Խանի կողմից ներկայացված հայցում նշված է նաեւ ներկայումս հանգուցյալ ռուս գեներալ Վյաչեսլավ Բորիսովը: Ըստ դատախազի եզրակացության՝ նա որոշակի դեր է կատարել 2008 թվականի հուլիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 10-ը երկրամասում տեղի ունեցած իրադարձությունների գործում:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՀԱՆՈՒՔԱՅԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Վրաստանի ազգությամբ հրեա քաղաքացիներին, ինչպես նաեւ պատմական հայրենիք՝ Իսրայել, վերադարձած վրաստանցի հրեաներին, շնորհավորել է Հանուքայի մեծ տոնի առիթով:

Իր շնոհավորական ուղերձը Վրաստանի վարչապետն իվրիտով եւ վրացերենով բարցրաձայնել է Թբիլիսիի Սինագոգում՝ հանդիսավոր արարողությանը:

10 ՀԱԶԱՐ ԼԱՐԻ՝ ՁՈՐԱԿՈՉԸ ՄԵԿ ՏԱՐՈՎ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վրաստանի պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեն հայտարարեց, որ պարտադիր զորակոչի մեկ տարով հետաձգման վճարը սահմանվել է 10 հազար լարի, ընդ որում, նոր որոշմամբ, անձին տարկետման իրավունք կտրվի միայն մեկ անգամ:

- 10 հազար լարիի դիմաց զորակոչը մեկ տարի հետաձգելուց հետո՝ անձը նորից կզորակոչվի,- նշել է պաշտպանության նախարարը:

ԹՈՂԱՐԿՎԵԼ Է ՎԱԽԹԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼԻՈՒ ՄԵՏԱՂԱԴՐԱՄ



Վրաստանի Ազգային բանկը սկսել է Վախթանգ Գորգասալու մետաղադրամների հավաքածուի թողարկումը:

«Վրաստանի Ազգային բանկը շարունակում է «Վրաստանի արքաներ» շարքի մետաղադրամների հավաքածուների թողարկումը, եւ այս անգամ 5 լարի արժողությամբ մետաղադրամները նվիրված են Վախթանգ Գորգասալի թագավորին: Ոսկյա մետաղադրամի արժեքը 1380 լարի է: Մետաղադրամը կարելի է ձեռք բերել նախապես պատվիրելով:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(23 դեկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.6667
1 ԵՎՐՈ	2.8368
100 ՌՈՒԲԼԻ	3.8635
1000 ԴՐԱՄ	6.7717

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ



ՀԱՐԿԱՅԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՆԱՆ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ

Վրաստանի խորհրդարանին են ներկայացվել «Հարկային օրենսգրքի» փոփոխությունները, ըստ որի՝ եկամտահարկի, գյուղատնտեսական կոոպերատիվների եւ գյուղատնտեսության ոլորտում աշխատող ֆիզիկական անձանց շահութահարկի եւ գույքահարկի գծով արտոնությունները, երեք տարի ժամկետով՝ մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը, կերկարաձգվեն:

Օրենքի նախագծում նշվում է, որ, մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը, եկամտահարկի/շահութահարկի վճարումից ազատվում է գյուղատնտեսական արտադրություններում աշխատող անձի/արտադրության կողմից Վրաստանում արտադրած գյուղմթերքների առաջնային մատուցմամբ ստացված հարկադրվող եկամուտը, եթե, օրացուցային տարվա ընթացքում, նման մատուցմամբ ստացված միասնական եկամուտը չի գերազանցում 200 000 լարին:

Փոփոխություններով հստակեցվում է, որ, նշված գործունեության շրջանակներում, վճարվող աշխատավարձերի գծով, բյուջե վճարման ենթակա եկամտահարկի արտոնությունը հետաձգվելու է երեք տարով: Նաեւ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար սահմանված եկամտային հարկից ազատման արտոնությունը կհետաձգվի երեք տարով:

Մասնավորապես, հարկադրումից կազատվի Վրաստանում ռեզիդենտ իրավաբանական անձի կողմից հրապարակային առաջարկով թողարկված պարտքային արժեթղթերից՝ տոկոսների տեսքով ստացված եւ Վրաստանի Ազգային բանկի կողմից ճանաչված, կազմակերպված շուկայում թույլատրված առեւտրից ստացված եկամուտը:

Նախագծի համաձայն՝ մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը կերկարաձգվի ներմուծման հարկի զիջումը, որը վերաբերում է ծխախոտի հումքի ներմուծմանը: Բացի վերը նշվածից, մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը, կշարունակվի այն օրենքը, ըստ որի՝ սեփական բնակության վայրի կարճաժամկետ վարձակալություն տվող ֆիզիկական անձը, հարկային մարմին դիմելու դեպքում, հարկվում է հաստատագրված եկամտահարկով, եթե նա կամովին հաշվառված չէ՝ որպես ԱԱՀ վճարող կամ, այս գործունեության ընթացքում, ցանկացած շարունակական 12 օրացուցային ամիսների ընթացքում, նրա կողմից իրականացված գործառնությունների ընդհանուր գումարը չի գերազանցում 100 000 լարին:

Ֆիզիկական անձի համար հաստատագրված եկամտահարկով հարկման օբյեկտ է համարվում կարճաժամկետ վարձակալության համար նախատեսված բնակելի տարածքը, իսկ դրույքաչափը որոշվում է ըստ հարկման օբյեկտի (սենյակի) եւ կազմում է 10 լարի՝ մեկ քառակուսի մետրի համար, օրացուցային ամսվա համար: Բացի այդ, նախագիծը հետաձգելու են ապահովագրական կազմակերպությունների շահութահարկի էստոնական մոդելին անցնելու դրույքները՝ մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը, իսկ շահութահարկի օբյեկտը կլինի օրացուցային տարվա ընթացքում ստացված ընդհանուր եկամտի տարբերությունը, հարկային օրենսգրքով նախատեսված նվազեցման չափը:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԶԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է 4 ՏՈԿՈՍՈՎ

Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալներով, երկրում, 2022 թվականի երեք եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ստեղծվել է ավելի քան 100 հազար աշխատատեղ, իսկ գործազրկության մակարդակը նվազել է 4 տոկոսով:

- Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ գործազրկության մակարդակը նվազել է մոտ 3,9 տոկոսով եւ կազմել 15,6 տոկոս, 2021 թվականի վերջի համեմատ՝ երկրում աշխատանք ունեցողների թիվն աճել է մոտ 9 տոկոսով՝ 114 հազար անձ աշխատանքի է տեղավորվել:

Աշխատանքի տեղավորված 114 հազար անձից 105 հազարը մասնավոր հատվածի ներկայացուցիչ է,- ասել է Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության գործադիր տնօրեն Գոգիտա Տոդրաձեն:

Աշխատատեղերի աճ է գրանցվել առեւտրի, շինարարության, հյուրանոցների եւ ռեստորանների ոլորտներում:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԾԱԼԿԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ



Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետ Իլիա Սաբածեն հանրությանը ներկայացրեց քաղաքապետարանի գործունեության 2022 թվականի հաշվետվությունը: Ստորեւ, որոշ կրճատումներով, այն ներկայացնում ենք «Վրաստանի» ընթերցողներին:

Ըստ ներկայացված փաստաթղթի, 2022 թվականի համար, մունիցիպալիտետի բյուջեն ծրագրված էր 7691600 լարի: Տարվա ընթացքում վերոնշյալ գումարն ավելացավ, մասնավորապես՝ նորացված տարածաշրջանների հիմնադրամի կողմից մունիցիպալիտետին փոխանցվեց 1779770 լարի, տարածաշջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամից՝ 4323728 լարի, գյուղի աջակցության ծրագրով՝ 572 հազար լարի, բարձրալեռ տարածաշրջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամից՝ 400 հազար լարի, տարերային աղետների հետեւանքների վերացման միջոցառումների ապահովման համար՝ 405 հազար լարի: Աշակերտներին տրանսպորտով ապահովելու եւ վթարային դպրոցների վերանորոգման համար հատկացվել էր 297100 լարի, հավելյալ արժեքահարկից՝ 173400 լարի, գույքահարկից՝ 950 հազար լարի: Վերոնշյալի հաշվառմամբ, 2022 թվականի համար, Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի բյուջեն կազմեց 18428700 լարի:

Ներկայացված հաշվետվության համաձայն՝ 2022 թվականին, Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանը, տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի կողմից հատկացված գումարով, իրականացրել է Թբիլիսի-Ծալկա ավտոմոբիլային ճանապարհի 3 կիլոմետրանոց հատվածի Դաշբաշից Սուրբ Գիորգի եկեղեցի տանող եւ Բերթա-Օզնի գյուղերը կապող ճանապարհների վերանորոգումը: 2022 թվականից սկսվել է մոտ 20 կիլոմետր երկարության մունիցիպալային ճանապարհների վերանորոգումը, որը ծրագրված է ավարտել 2023-2024 թվականներին, ինչի համար կծախսվի 15199228 լարիի գումար:

Բացի այդ, վերանորոգվել են Բուռնաշեթ, Չիֆթքիլիսա տանող ճանապարհները: Վերանորոգման աշխատանքներ են կատարվել նաեւ Ծալկայի շրջկենտրոնում:

Հաշվետու ժամանակահատվածում, գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում, հատկացված 572 հազար լարիով, ինչպես նաեւ տեղական բյուջեից հատկացված 228 հազար լարիով, մունիցիպալիտետի 43 բնակավայրերում իրականացվել է 51 նախագիծ: Ընդորում, իրականացվելիք նախագծերն ընտրվել են բնակավայրերի բնակչության ընդհանուր ժողովներում:

Վրաստանի վարչապետի նախաձեռնած «Նորացված տարածաշրջաններ» պետական ծրագրի շրջանակներում, անմիջականորեն Ծալկայի շրջկենտրոնում, կարգավորվեցին փողոցներ, մայթեր, անցկացվեցին ասֆալտապատման աշխատանքներ: Այդ նպատակով, ընդհանուր առմամբ, ծախսվեց 569292 լարի: Այդ միջոցներով իրականացվում է նաեւ Ծալկայի կենտրոնական զբոսայգու կարգավորումը:

Ենթակառույցային նախագծեր են իրականացվել նաեւ տեղական բյուջեից հատկացված գումարների հաշվին: Մասնավորապես, վերանորոգվել է տարերային աղետից տուժած Նարդեւան գյուղի մարզադահլիճը, ինչի համար ծախսվել է 11965 հազար լարի:

Հաշվետու ժամանակահատվածում, նշանակալից գումարներ են հատկացվել առողջապահության եւ սոցիալական ծրագրերի իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, 365 սոցիալապես անապահով ընտանիքների, օգնության կարգով, տրվել է 54750 լարի, 61 բազմազավակ ընտանիքների հատկացվել է 12200 լարիի օգնություն: 6 հազար լարի գումար է ծախսվել խնամակալին կորցրած 30 ընտանիքների օգնության համար: Սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց եւ մինչեւ 18 տարեկան սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաներին (ընդհանուրը՝ 77 մարդ) հատկացվել է 15400 լարիի օգնություն:

Հաշվետու ժամանակահատվածում, ոչ դրամական օգնություն է ցուցաբերվել մունցիպալիտետում գրանցված եւ, փաստորեն, բնակվող քաղաքացիների, անչափահաս երեխաների, ինչպես նաեւ բռնագաղթված ընտանիքներին բժշկական սպասարկումների (վիրահատության) անցկացման համար, որոնք մասնակիորեն ֆինանսավորվում կամ չեն ֆինանսավորվում պետական ծրագրերով ու բժշկական պոլիսներով: Հատկացված գումարը ծախսվել է 400 անձի համար եւ կազմել է 299648 լարի:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ



Նինոծմինդայում անցկացվեց դանիական KVINFO կազմակերպության եւ Դանիայի արտաքին գործերի նախարարության կողմից աջակցված, «Կանանց հզորացում եւ լիարժեք մասնակցություն տեղական գենդերային քաղաքականության իրականացմանը» նախագծի շրջանակներում կայացած միջոցառումների ամփոփիչ հանդիպումը:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի մասնակցությամբ անցկացված հանդիպման նպատակը՝ տարվա ընթացքում իրականացված հետազոտությունների՝ գենդերային կարծրատիպերի եւ վնասակար սովորությունների ուսումնասիրությունն էր եւ պարտադիր գենդերային քվոտների մեխանիզմների ազդեցության դիտարկումը տեղական ինքնակառավարման քաղաքականության վրա:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ախալքալաքիի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Ապագայի տանը», կանանց նկատմամբ բռնության դեմ 16-օրյա քարոզարշավի շրջանակներում, անցկացվեց միջոցառում՝ նվիրված Ախալքալաքիում ապրող հաջողակ կանանց պարգեւատրմանը:



Մունիցիպալիտետի զարգացման գործում ունեցած նշանակալի ներդրման համար՝ պատվոգրեր եւ խորհրդանշական նվերներ են տրվել մասնագիտական գործունեության մեջ հաջողակ կանանց:

Միջոցառմանը ներկա էին Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը եւ ինքնակառավարման մարմնի այլ ներկայացուցիչներ:

Նշված միջոցառման կազմակերպիչն էր քաղաքապետարանի կրթության, մշակույթի, հուշարձանների պահպանության, սպորտի, երիտասարդության հարցերի, զբոսաշրջության զարգացման եւ գենդերային հավասարության վարչությունը:

ԴԱՂԵԹԽԱՉԵՆ-ԲՈԼՆԻՍԻ, ՇՈՒԼԱՎԵՐ-ՇԱՀՈՒՄՅԱՆ-ՍԻՈՆԻ-ՃԵՐԱՔՎԻ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԱՐԱԳ ՏԵՄՊԵՐՈՎ



Վրաստանի ավտոճանապարհների դեպարտամենտի նախագահ Գիորգի Ծերեթելիի Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ծանոթացավ երկրամասում արդեն ավարտված եւ ընթացիկ ենթակառույցային նախագծերին:

Գերատեսչության տեղեկության համաձայն՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում 2022 թվականին մեկնարկել է 22 ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 114,3 մլն լարի: Նշվում է, որ ավարտվել է 11 ծրագիր, իրականացվել են մինչեւ 60 կմ ավտոճանապարհի վերականգնողական աշխատանքներ, վերականգնվել է 2 կամուրջ, իրականացվել է 1 ամբարտակի, աղետների կանխարգելման եւ վերացման ծրագիր:

Ավարտվել է Թեթրիծղարո-Դաղեթի-Բոլնիսի ավտոճանապարհի 5 կմ-անոց հատվածը, Թբիլիսի-Գաչիանի-Ռուսթավի ավտոճանապարհի 5,4 կմ-անոց հատվածը, ինչպես նաեւ՝ ներքին նշանակության Նորիո-Լիլո ավտոճանապարհն ու Շուլավերի-Շահումյան-Սիոնի-Ծերաքվի 6 կմ-անոց ճանապարհահատվածը:

Նշվում է, որ մյուս նախագծերի վրա աշխատանքներն ակտիվ շարունակվում են, եւ կավարտվեն 2023 թվականին: Այդ ճանապարհահատվածներն են Մառնեուլի-Թեթրիծղարո-Ծալկա ավտոճանապարհի 16 կմ-անոց հատվածը, Փոնիճալա-Մառնեուլի-Գուգութի ավտոճանապարհի 15 կմ-անոց հատվածը եւ Իմերա-Բարեթի-Թեջիսի-Չիվթքիլիսա-Խաչկով-Գումբաթի-Ավրանլո ճանապարհի 8,6 կմ-անոց հատվածը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՆՎԱԶՈՒՄ Է ԵՎ ՄԻՏՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՈՂՋ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Եվրամիության կողմից ռուսական նավթամթերքների վերին շեմի սահմանումից հետո՝ նկատելի տեղաշարժեր սկսվեցին նավթամթերքի համաշխարհային շուկայում, որտեղ վավերացվեց «սեւ ոսկու» սակագնի նշանակալի անկում: Նման պայմաններում վառելանյութի գինը վավերացվեց նաեւ Վրաստանում եւ այդ միտումը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի ողջ դեկտեմբերի ընթացքում:

Նշենք, որ Եվրամիությունը ռուսական նավթի մեկ բարելի համար սահմանել է 60 դոլարի վերին շեմ, եւ այդ հանգամանքն իր ազդեցությունը գործեց նավթամթերքի համաշխարհային շուկայում: Փորձագետների գնահատմամբ, Եվրամիության որոշումից հետո, Ռուսաստանից Վրաստան ներկրվող վառելանյութի, մասնավորապես, բենզինի մանրածախ սակագինը նվազելու է: Նվազեցման միտումն արդեն առկա է: Ներկա դրությամբ, մեկ լիտր «Ռեգուլյարի» արժեքը բենզալցման կայաններում տատանվում է 2,40-2,45 լարիի սահմաններում:

Ինչպես նշեց՝ Վրաստան վառելանյութ ներկրողների միության ղեկավար Վախթանգ Իոբաշվիլին, վառելանյութի մանրածախ սակագնի նվազեցումը տեւական բնույթ կունենա, թեեւ դժվար է կոնկրետացնել, թե առաջիկայում, ի՞նչ գներ կսահմանվեն վառելանյութի համար:

- Բոլոր դեպքերում, վրացական ընկերություններին եւ սպառողներին նման միտումն օգտավետ կլինի, քանի որ թանկացումը ոչ մեկին ձեռնտու չէ,- հայտարարեց Վախթանգ Իոբաշվիլին:



Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ